ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՀՐԱՄԱՆ

«18» 09 2023 թ. Թիվ 225-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 14-Ի ԹԻՎ 93-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով և «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով.

Հրամայում եմ.

1. Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահի 2022 թվականի հունիսի 14-ի «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի ներքին կարգապահական կանոնները և Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի վարքագծի կանոնները հաստատելու մասին» թիվ 93-Լ հրամանի 2-րդ կետով հաստատված N 1 հավելվածի (այսուհետ՝ հավելված) 36-րդ կետը լրացնել հետևյալ խմբագրությամբ 15.1-ին ենթակետով.

«15.1) Հայաստանի Հանրապետության դրոշը գործածելիս՝ պահպանել «Հայաստանի Հանրապետության դրոշի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված Հայաստանի Հանրապետության դրոշին ներկայացվող պահանջները,»:

2. Հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 40.1-ին կետով.

«40.1. «Հայաստանի Հանրապետության դրոշի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված Հայաստանի Հանրապետության դրոշին ներկայացվող պահանջների պահպանման նկատմամբ հսկողություն է իրականացնում Կոմիտեի գլխավոր քարտուղարը՝ Կոմիտեի կենտրոնական մարմնի վարչական շենքում, Կոմիտեի հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների (բաժինների, վարչությունների) պետերը՝ տվյալ ստորաբաժանումների տեղակայման վարչական շենքերում:»:

3. Սույն հրամանն ուղարկել Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահի տեղակալներին, խորհրդականներին, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի գլխավոր քարտուղարին, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի հիմնական և աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների պետերին:

Ա. ՔՅԱՐԱՄՅԱՆ